ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք.Երևան
26 նոյեմբեր 2026 ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տարոն Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Խաչատուր Մաջարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի հրավերի և հայտարարության տեքստը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահ Տ.Վարդանյանը նիստը հայտարարեց բացված և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 24.11.26թ-ին ներկայացված գնման հայտը և ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղար Տ.Իգիթյանի 25.11.2026թ.-ի «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/14», ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին թիվ 2279-Ա հրամանը, ներկայացրեց ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կարիքների համար «ըմպելու ջրի» գնման հայտարարության և հրավերի տեքստերը, գնման ընթացակարգի հետ կապված ամբողջ փաթեթը: Հանձնաժողովը ուսումնասիրեց և որոշեց՝

1. -հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը,
2. -հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հետադարձ աճուրդի ավարտից հետո, նույն օրվա ընթացքում, ք.Երևան, Արշակունյաց պ 63:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0
Հանձնաժողովի

Նախագահ՝_____ Տ. Վարդանյան

Քարտուղար՝_____ Ն. Աբովյան

Հանձնաժողովի անդամներ՝

1. _____ Խ.Մաջարյան

2. _____ Հ. Հովհաննիսյան